ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 23.04.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/22

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Ինչեյփ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Գ.Մկրտչյանի (լիազորագիր՝ տրված 16.04.2021թ.),

Ա/Ձ Կարապետ Հայկարամի Ստեփանյանի ներկայացուցիչ Ա.Պարանյանի (լիազորագիր՝ տրված 21.04.2021թ.),

քննելով ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար զանազան պահեստամասերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-20/4» ծածկագրով բաց մրցույթ շրջանակներում «Ինչեյփ» ՍՊԸ-ի կողմից 12.04.2021թ. ներկայացված (13.04.2021թ. վարույթ ընդունված) բողոքը և Ա/Ձ Կարապետ Հայկարամի Ստեփանյանի կողմից 20.04.2021թ. ներկայացված համանման բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-202122 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. <u>«Ինչեյփ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Ինչեյփ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 12.04.2021թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ ձեզ, որ ՀՀ Պաշտպանության նախարարության (այուհետ՝ պատվիրատու) 12.03.2021 թվականին հայտարարված ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-20/4 ծածկագրով բաց մրցույթի միջոցով ապրանքների ձեռքբերման ընթացակարգի հրավերի (այսուհետ՝ հրավեր) առկա են մի շարք սխալներ՝ հրավերի 1.1 կետում պատվիրատուն նշում է, որ ցանկանում է ձեռք բերել զանազան պահեստամասեր՝ ինժեներական, ճանապարհաշինական և տեխնիկայի վերանորոգման պահեստամասեր (այսուհետ նաև ապրանք):

Հրավերի հավելված 1-ում տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց պատվիրատուն նշում է անհրաժեշտ պահեստամասերի անվանումները և դրանց նախահաշվային գները:

Չնայած նրան, որ պատվիրատուի կողմից հրապարակված հրավերում հստակ նշված չեն ձեռք բերվելիք ապրանքների քանակները և պատվիրատուն հրավերի 3.3 կետում կիրառում է ծառայությունների կամ աշխատանքների ձեռքբերման ընթացակարգերի հրավերներում կիրառվող բանաձևը օգտագործելով պահեստամասերի մատակարարման առավելագույն միավորի գին նախադասությունը, որը ապրանքների գնման դեպքում ուղղակի անհեթեթ է, կուզեի ուշադրություն հրավրել այն հանգամանքի վրա, որ հրավերում հստակ տարբեր տեխնիկական բնութագրեր ունեցող ապրանքները խմբավորված են մեկ չափաբաժնում ինչն էլ խախտում է «Գնումների մասին» ՀՀ Օրենքի (այսուհետ՝ օրենք) 25-րդ հոդվածի 2-րդ կետը՝ արգելվում է խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում:

Եթե գնման առարկան չտրոհվի չափաբաժիններում և մնա մեկ չափաբաժնում խմբավորված կստեղծի բարդություններ մասնակիցների համար բանկային երաշխիքների կամ կանխիկ փողի գրավադրման հանգամանքով պայմանավորված, ինչպես նաև բոլոր մասնակիցները չէ որ կարող են մատակարարել այդքան բազմազան ապրանքներ:

Այսպիսով պատվիրատուն կոպիտ կերպով խախտում է նաև օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ կետը այն է՝ չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք՝ խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին, համարժեք չեն՝ ուղղակիորեն չեն բխում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է փոխել հրավերի տեքստը և գնման առարկա հանդիսացող ապրանքները տրոհել առանձին չափաբաժիններում:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 16.04.2021թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. <u>Ա/Ձ Կարապետ Հայկարամի Ստեփանյանի կողմից ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.

Ա/Ձ Կարապետ Հայկարամի Ստեփանյանը 20.04.2021թ. ներկայացված համանման բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ «Զանազան պահեստամասերի» ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-20/4 ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերը <u>www.gnumner.am</u> պաշտոնական տեղեկագրում հրապարակվել է՝ 12.03.2021թ., ժամը 12:03:

Ընթացակարգով հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել՝ 23.04.2021թ. ժամը 11:00 (ըստ <u>www.gnumner.am</u>՝ հրապարակված տեղեկատվության):

Ընթացակարգի հրավերով սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

5.ՀԱՅՏԻ ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԸ

Պահեստամասերի գնման դեպքում, մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է՝ հաշվի առնելով սույն հրավերով սահմանված պահեստամասերի յուրաքանչյուր տեսակի մատակարարման միավոր առավելագույն գների հանրագումարը, նկատի ունենալով, որ կնքվող պայմանագրի շրջանակում պահեստամասերի մատակարարման դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի պահեստամասերի մատակարարման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն պահեստամասերի մատակարարման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն առանձին տեսակի պահեստամասերի մատակարարման առավելագույն միավորի գինն է.

Քանակն մատակարարված պահեստամասերի քանակն է:

Հավելված N 1
N ԲՄԱՊՁԲ-21-20/4- պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկայի անվանումը	Հ/մ	Քանակը	Առավելագույն գինը /գումարը/ (ՀՀ դրամ)	Մատակարարումը 2021թ. ըստ եռամսյակների, ընդ որում՝		
					2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 01.12.2021թ.
1	Զանազան պահեստամասեր (Ինժեներական /ճանապարհաշինական/ տեխնիկայի վերանորոգման պահեստամասեր)	դրամ	1	151200000	40000000	91000000	20200000

Ծանոթություն՝

- բոլոր պահեստամասերը պետք է հանձնվեն ԻԶՎ կենտրոնական պահեստ, որը գտնվում է ք. Էջմիածին Իսի-Լե-Մուլինոյի փողոց 7,
- ցանկում նշված պահեստամասերը պետք է լինեն չօգտագործված և պիտանելիությունը երաշխավորվի մատակարարի կողմից,
- ձեռք բերվող պահեստամասերի քանակները կկանոնակարգվեն ՀՀ ԶՈՒ ԻԶՎ կողմից տրվող հայտերով, որոնք մատակարարի կողմից համաձայն հայտերի կտրամադրվեն պահանջ ներկայացնելուց 20-օրյա ժամկետում,
- պահեստամասերը ըստ իրենց տեխնիկական պայմանների պետք է ունենան համապատասխան գործարանային փաթեթավորում:

Զանազան պահեստամասերի համար սահմանված միավորների նախահաշվային գները բաժանվել թվով 706 բաժինների և սահմանվել անհասկանալի առավելագույն միավորի գին հասկացողությունը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

2) պայմանագրի կնքման նպատակով *մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:*

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

Բողոքներ քննող անձի ուշադրությունը հրավիրում ենք այն հանգամանքի վրա, որ Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիրը կազմվել է Օրենքի 13-րդ հոդվածի

պահանջների խախտմամբ, հրավեը հստակ չէ, գնային առաջարկի համար սահմանված են անհասկանալի և ոչ անկալելի նորմեր (վերոհիշյալի մասով ավելի մանրամասն հիմնավորումներ կներկայացվեն բողոքի քննությանը նվիրված նիստի ժամանակ):

Վերոհիշյալ փաստերը վկայում են, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «զանազան պահեստամասերի» ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-20/4 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը Ընթացակարգի հրավերը կազմել է Օրենքի 13-րդ հոդվածի պահանջների խախտմամբ, ինչն էլ իր հերթին հանգեցնելու է Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման սկզբունքի խախտմանը, ինչպես նաև զրկել մասնակիցներին Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված գնման գործընթացին մասնակցելու իրավունքի արդյունավետ իրականացման հնարավորությունից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Նույն հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման…»

Ամփոփելով վերոգրյալը՝ Ա/Ձ Կարապետ Հայկարամի Ստեփանյանը խնդրել է պարտավորեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «զանազան պահեստամասերի» ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-20/4 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ ընդունելու որոշում՝ ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-20/4 ծածկագրով ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ:

Այնուհետև՝ 23.04.2021թ., Ա/Ձ Կարապետ Հայկարամի Ստեփանյանի ներկայացուցչի կողմից ներկայացվել է բողոքի պահանջի փոփոխություն, համաձայն որի՝ վերջինս

փոփոխել է համանման բողոքի պահանջը և խնդրել պարտավորեցնել ՀՀ-ՊՆ-ԲՄԱՇՁԲ-21-20/4 ծածկագրով ընթացակարգի հրավերում կատարել փոփոխություն՝ բողոքով նշված հիմնավորումների շրջանակներում:

Ա/Ձ Կարապետ Հայկարամի Ստեփանյանը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 23.04.2021թ. ժամը 09:53-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 22.04.2021թ թիվ ՊՆ/510-ԳՔ/2128-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարությունում ուսումնասիրվել է Ձեր 2021թ. ապրիլի 13-ի ԲՔԱ-ԳՆ/2/5545-2021 գրությամբ ներկայացված՝ «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-20/4» ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ «Ինչեյփ» ՍՊԸ-ի բողոքը:

Հայտնում եմ հետևյալը.

ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 23-րդ կետով նախատեսված բանաձևը սահմանված է ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների գնման համար, սակայն չի արգելվում ապրանքների գնման ընթացակարգի կազմակերպման դեպքում ևս կիրառել նշված բանաձևը՝ այն դեպքում, երբ ձեռքբերման ենթակա ապրանքների քանակները հնարավոր չէ սահմանել: Ավելին, վերոհիշյալ ընթացակարգի դեպքում այդ բանաձևի կիրառումը հնարավորություն է տալիս խուսափելու մասնակիցների կողմից հնարավոր չարաշահումից, ինչպիսին է, օրինակ, այն դեպքը, երբ ակնհայտորեն չօգտագործվող կամ հազվադեպ օգտագործվող պահեստամասերի գները ներկայացվում են նախահաշվայինից էականորեն ցածր, իսկ հաճախակի օգտագործվող պահեստամասերի գները՝ նախահաշվային գներին շատ մոտ:

Տեղեկացնում եմ, որ նախապես հնարավոր չէ կանխորոշել, թե որ տեսակի տեխնիկաների որ պահեստամասերը շարքից դուրս կգան, և ձեռք բերվող պահեստամասերը նախատեսված են ոչ թե պլանավորված հիմնական նորոգումների, այլ ընթացիկ սպասարկումների ու նորոգումների համար: Բացի այդ, ֆինանսական միջոցների

սղությունը հնարավորություն չի ընձեռնում ձեռք բերել հաճախակի շարքից դուրս եկող պահեստամասերի այնպիսի խմբաքանակներ, որոնք կապահովեն միաժամանակ տեխնիկաների անխափան աշխատանքը և պահեստում պաշարի ստեղծումը: Այդ իսկ պատճառով չի պլանավորվում կոնկրետ քանակների նշմամբ պահեստամասերի ձեռքբերում:

Այսինքն՝ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում կիրառված բանաձևը չի հակասում «Գնումների մասին» ՀՀ օրենքին:

Ինչ վերաբերվում է բողոքում նշված՝ տարբեր բնութագրեր ունեցող գնման առարկաների համար մեկ չափաբաժնով գնման գործընթաց կազմակերպելուն, ապա հայտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ կետով չի արգելվում խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում, եթե պատվիրատուն հիմնավորում է նման խմբավորման անհրաժեշտությունը, ինչը և կատարվել է մեր կողմից:

Մասնավորապես՝ զանազան պահեստամասերի անվանումը՝ իր բաղադրիչներով, դառնում է մեկ չափաբաժին, քանի որ.

ա) անվանատողերում նշված պահեստամասերը, ըստ տեխնիկաների հանգույցների, փոխկապակցված են իրար և փոխարինվում են միաժամանակ,

բ) որոշ տեխնիկաների մի շարք պահեստամասեր համափոխարինելի են:

Համաձայն ՀՀ Կառավարության 25.03.2021թ. թիվ 414-Ն որոշման՝ մասնակիցը որակավորման ապահովումը կարող է ներկայացնել վերոնշյալ ընթացակարգով սահմանված առավելագույն գնի 30 տոկոսի չափով՝ հրավերով նախատեսված 100 տոկոսի փոխարեն:

Հաշվի առնելով վերոգրյալ բոլոր պարզաբանումները՝ կարող ենք վստահորեն հավաստել, որ չեն խախտվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջները, և հրավերի տեսքը փոխելը՝ ապրանքները առանձին չափաբաժիններում տրոհելը, անհնարին է»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 16.04.2021թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2021/22 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲՔԱ-ՆԳ-2021/22 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար զանազան պահեստամասերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-20/4» ծածկագրով բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

2. Ընթացակարգի հրավերում ներառված պայմանագրի նախագծի Հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանվել է հետևյալը.

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Չ/Մ	**Առավելագույն գինը /գումարը/ (ՀՀ դրամ)**
1	Զանազան պահեստամասեր (Ինժեներական /ճանապարհաշինական/ տեխնիկայի վերանորոգման պահեստամասեր)	դրամ	151200000

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Ինչեյփ» ՍՊԸ-ի 12.04.2021թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, ՀՀ պաշտպանության նախարարության դիրքորոշումը և գործով առկա փաստաթղթերը, Ա/Ձ Կարապետ Հայկարամի Ստեփանյանի 20.04.2021թ. համանման բողոքը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածը սահմանում է՝

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի,

ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Օրենքի 25-րդ հոդվածի համաձայն՝

1. Մրցակցային գնման ձևերի կիրառման ժամանակ առանձին բնութագրեր ունեցող գնումները մեկ գնման գործընթացի շրջանակներում կարող են բաժանվել չափաբաժինների: Արգելվում է՝

1) մեկ գնման առարկան բաժանել առանձին չափաբաժինների՝ մրցակցային գնման ձևի կիրառումից խուսափելու նպատակով.

2) փոփոխել պայմանագրով նախատեսված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների բնութագրերը:

2. ***<u>Արգելվում է խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում, բացառությամբ այն դեպքերի, երբ պատվիրատուն հիմնավորում է նման խմբավորման անհրաժեշտությունը</u>***:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ՝ բացառությամբ գնումը սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով կատարելու դեպքերի:

Այսպես՝ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար զանազան պահեստամասերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-20/4» ծածկագրով բաց մրցույթ:

Ընթացակարգի հրավերում ներառված պայմանագրի նախագծի Հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանվել է հետևյալը.

Չ/Հ	Գնման առարկայի անվանումը	Չ/Մ	**Առավելագույն գինը /գումարը/ (ՀՀ դրամ)**
1	Զանազան պահեստամասեր (Ինժեներական /ճանապարհաշինական/ տեխնիկայի վերանորոգման պահեստամասեր)	դրամ	151200000

Այսպիսով՝ անդրադառնալով Հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված գնման առարկային՝ «Զանազան պահեստամասեր (Ինժեներական /ճանապարհաշինական/ տեխնիկայի վերանորոգման պահեստամասեր)», հարկ եմ համարում արձանագրել, որ Հավելված 1-ի՝ Տեխնիկական բնութագրի ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ Պատվիրատուն, 1 չափաբաժնով որպես գնման առարկա նախատեսելով «Զանազան պահեստամասեր (Ինժեներական /ճանապարհաշինական/ տեխնիկայի վերանորոգման պահեստամասեր)», նկատի է ունեցել թվով 706 անուն ապրանքատեսակ, այսինքն, 1 չափաբաժնում որպես գնման առարկա խմբավորելով 706 անուն տարբեր բնութագրեր ունեցող ապրանքատեսակ (Օրինակ՝ Շարժիչի բլոկ (Բ-10), Ակումուլյատորային մարտկոց, Հերմետիկ), Պատվիրատուն արհեստականորեն սահմանափակել է հնարավոր մասնակիցների շրջանակը և նրանց միջև մրցակցության հնարավորությունը՝ արդյունքում խախտելով Օրենքի 3-րդ հոդվածով սահմանված պահանջները, քանի որ նման կերպ գնման առարկան սահմանելով՝ Պատվիրատուն նաև առաջացնում է Ընթացակարգի մասնակիցների համար հավելյալ ֆինանսական բեռ՝ հայտի ապահովում, որակավորման և պայմանագրի ապահովումներ ներկայացնելու հետ կապված, ուստի գտնում եմ, որ ***<u>Պատվիրատուն պետք է Ընթացակարգի հրավերում կատարի փոփոխություն՝ մեկ չափաբաժնում որպես մեկ գնման առարկա խմբավորված 706 ապրանքատեսակները տրոհի առանձին չափաբաժինների:</u>***

Միևնույն ժամանակ, անդրադառնալով Պատվիրատուի կողմից Ընթացակարգի հրավերը կազմելիս վերը շարադրված չափաբաժնի մասով որոշմամբ արձանագրված խախտմանը, հարկ եմ համարում արձանագրել, որ Պատվիրատուն իր կողմից

ներկայացված դիրքորոշմամբ որևէ կերպ չի հիմնավորել իրարից տարբեր տեխնիկական բնութագրեր ունեցող գնման առարկաների մեկ չափաբաժնում խմբավորելը, այսինքն՝ ***Պատվիրատուի կողմից խախտվել է նաև Օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջը, այն է՝ արգելվում է խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում, բացառությամբ այն դեպքերի, երբ պատվիրատուն հիմնավորում է նման խմբավորման անհրաժեշտությունը:***

Գտնում եմ, որ վերոգրյալ փոփոխությունը կնպաստի Ընթացակարգին մասնակիցների շրջանակի ընդլայնմանը, ինչն էլ իր հերթին կհանգեցնի մրցակցության ապահովմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Ինչեյփ» ՍՊԸ-ի կողմից 12.04.2021թ. ներկայացված բողոքը և Ա/Ձ Կարապետ Հայկարամի Ստեփանյանի կողմից 20.04.2021թ. ներկայացված համանման բողոքը բավարարել.

Պատվիրատուին պարտավորեցնել «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-20/4» ծածկագրով բաց մրցույթի հրավերում կատարել փոփոխություն՝ որոշմամբ ներկայացված հիմնավորումներով և վերլուծությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**